Յօդ. 6. Դատաստանական կանոնադրութեան 100-րդ յօդուածի 1 կէտը ձևակերպել այսպէս՝ Երևան քաղաքը իր դաւառով 750 անձ. 3 կէտը՝ «սոյն տարայ համար դաւառներում շրջանային դատարանի նիստերը ոչ աւել 4-ից՝ մասնակցութեամբ երդուեալ ատենակալների իւրաքանչիւր այդպիսի շրջանում գիւղից — ընդամենը 260 անձ»:

Յօդ. 7. Դատաստանական կանոնադրութեան յօդուածի՝ 201[1], 201[2], 202, 204 *ծանօթութիւնով*, 205[1], 670, 1000, 1001, 1002, 1003, 1009, 1010, 1016, 1021, 1025, 1026, 1030, 1031, 1032, 1116, 12801 *վերացւում է:*

(Հաստ. դեկտ. 6-ին 1918թ.)

1919թ. Ֆինանսական նախահաշիւների և պետական եկ ու մուտքի տախտակը կազմելու, քննելու և հաստատելու մասին. — 1) *Իւրաքանչիւր մինիստրութեան եկ ու մուտքի նախահաշիւների նախագծերն ուղարկւում են Ֆինանսական մինիստրութեան ոչ ուշ քան 1919թ. փետրուարի 1-ը:*

2) *Իւրաքանչիւր մինիստրութեան նախահաշուի նախագիծը նախօրօք քննում է նախահաշիւները քննող միջվարչական յանձնաժողովը, որը կազմւում է այդ մինիստրութեան, Ֆինանսական մինիստրութեան և պետական վերահսկողութեան ներկայացուցիչներից:*

3) *Յանձնաժողովների անդամների թիւը որոշւում է յիշեալ վարչութիւնների համաձայնութեամբ:*

4) *Այն նախահաշուային ենթադրութիւնները, որոնց մասին տարաձայնութիւն չի ծագում նախահաշիւներ քննող յանձնաժողովի մէջ, համարւում են հաւանութիւն գտած նախահաշուի նախագծի մէջ մուծելու համար:*

5) *Ծագած տարաձայնութիւնների մասին յիշեալ երեք վարչութիւնների ներկայացուցիչները զեկուցում են իրենց իշխանութիւններին: Եթէ վերջիններս չեն գայ համաձայնութեան, նախահաշուի նախագծին կցւում է նրանցից իւրաքանչիւրի եզրակացութիւնը:*

6) *Նախահաշուային յանձնաժողովի քննած նախահաշիւների նախագծերը տարաձայնութիւն առաջ բերող հարցերի մասին մտցրած եզրակացութիւնների հետ միասին ուղարկւում են Ֆինանսական մինիստրութեան միջոցով մինիստրների խորհուրդը ոչ ուշ քան 1919թ. փետրուարի 20-ը:*

7) *Մինիստրների Խորհուրդը քննելով նախահաշիւների նախագիծը, լուծելով վիճելի հարցերը և նախագծին իր հաւանութիւնը տալով վերադարձնում է նրանց Ֆինանսական մինիստրին՝ պետական եկ ու մուտքի տախտակի նախագիծը կազմելու համար:*

8) *Ֆինանսական մինիստրը մինիստրների խորհրդին ներկայացնում է պետական եկ ու մուտքի տախտակի նախագիծը ոչ ուշ քան 1919թ. մարտի 1-ը:*

9) *Մինիստրների խորհրդի կողմից հաւանութիւն գտած պետական եկ ու մուտքի տախտակի նախագիծը հրատարակւում է անմիջապէս և առաջարկւում Հայաստանի Խորհրդի քննութեան ոչ ուշ քան 1919թ. մարտի 20-ը:*

Ծանօթութիւն. Պետական եկ ու մուտքի տախտակի նախագծի հետ հրատարակւում է նաև նախընթաց 1918 թւի հաշուետուութիւնը:

10) *Թոյլատրւում է Հայաստանի Հանրապետութեան բոլոր մինիստրութիւններին 1919 թւի յունուարի մէկից մինչև մայիսի 1-ը պետական ծախքերն անելիս՝ զեկավարւել նախընթաց 1918 թւի եկից նախահաշիւներով:*

(Հաստ. յունուար 3-ին 1919թ.)